ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Բուլղարիայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով Հայաստանի և Բուլղարիայի միջև ավանդական լավ հարաբերությունները և երկու երկրների համար ընդհանուր եվրոպական հեռանկարների զարգացման հարցը,

հաշվի առնելով, որ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցությունը կնպաստի հաստատված լավ գործելակերպի և դրական փորձի փոխանակմանը երկու երկրների զարգացման համար այս շատ կարևոր փուլում,

ցանկանալով զարգացնել երկկողմ համագործակցությունը և հիմնվելով միջազգային իրավունքի և փոխադարձ հարգանքի ու հավասարության համընդհանուր սկզբունքների և նորմերի վրա,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը համաձայնում են համագործակցել աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում՝ սույն Համաձայնագրին և իրենց երկրների ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2

Կողմերի միջև սույն Համաձայնագրով նախատեսվող համագործակցությունը ընդգրկում է մասնավորապես հետևյալ ուղղությունները.

1. Սոցիալական ապահովության և կենսաթոշակային ոլորտները կարգավորող օրենսդրություն:
2. Սոցիալական համագործակցություն ոչ պետական կազմակերպությունների հետ:
3. Աշխատանքային հարաբերություններ և դրանց օրենսդրական հիմքերը, աշխատանքային վեճերի կարգավորման ուղիներ:
4. Աղքատության հաղթահարում, սոցիալական պաշտպանության մեխանիզմներ՝ աղքատության և սոցիալական մեկուսացման դեմ:
5. Զբաղվածության ազգային ռազմավարություն, աշխատաշուկայի ակտիվ քաղաքականության իրականացման մեխանիզմներ, ազգային աշխատաշուկայի պաշտպանություն:
6. Աշխատուժի մասնագիտական որակավորում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ինչպես նաև տարեցների մասնագիտական որակավորում:
7. Պաշտպանություն գործազրկության դեպքերից և զբաղվածության խթանում, երիտասարդների զբաղվածություն և խոցելի խմբերի ինտեգրում աշխատաշուկա:
8. Աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների ապահովում:
9. Պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից սոցիալական ծառայությունների տրամադրում մասնագիտացված հաստատություններում և համայնքներում:
10. Երեխաների պաշտպանություն և սոցիալական աջակցության տրամադրում երեխաներին ու նրանց ընտանիքների անդամներին:
11. Հաշմանդամների համար հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովում:
12. Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններ:
13. Պետական բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի իրականացման և ծախսված միջոցների նկատմամբ ներքին աուդիտի անցկացման ապահովում:
14. Փորձագիտական աջակցություն՝ մարդկանց ազատ տեղաշարժի, սոցիալական քաղաքականության և զբաղվածության բնագավառների օրենսդրական ակտերի ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցման և պրակտիկ իրականացման գործընթացին:
15. Այլ ուղղություններով, որոնց շուրջ Կողմերը համաձայնության կգան:

Հոդված 3

Կողմերի միջև սույն Համաձայնագրով նախատեսվող համագործակցությունը կիրականացվի հետևյալ ձևերով.

1. Օրենսդրության, գիտական հրապարակումների, հետազոտական և այլ փաստաթղթերի փոխանակում աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում:
2. Ճանաչողական այցեր:
3. Համատեղ սեմինարներ՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ:
4. Փորձագետների մասնակցությունը խորհրդաժողովներին և Կողմերից յուրաքանչյուրի տարածքում տեղի ունեցող այլ միջազգային միջոցառումներին:
5. Հայ փորձագետների վերապատրաստման իրականացում Սոֆիայում՝ Մարդկային ռեսուրսների զարգացման և տարածաշրջանային նախաձեռնությունների կենտրոնում՝ նախապես համաձայնեցված թեմաներով: Անհրաժեշտության դեպքում, հայաստանյան կողմը նախատեսում է ֆինանսական աջակցություն՝ ԱՄԿ տեխնիկական աջակցության ներքո:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի կատարման համար իրավասու մարմիններն են՝

ա) Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի

նախարարությունը,
բ) Բուլղարիայի Հանրապետության Կառավարության կողմից՝ Աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարարությունը:

Հոդված 5

Կողմերն անհրաժեշտության դեպքում նախապես խորհրդատվություն են փոխանակում տարբեր հարցերի շուրջ, քննարկում են ընդհանուր դիրքորոշումներ և աջակցություն են ցուցաբերում՝ քվեարկելով միջազգային իրավական ընդունելի փաստաթղթերի և դրանց հետ կապված բանաձևերի օգտին, նմանապես, Կողմերը ցուցաբերում են երկկողմ աջակցություն համապատասխան միջազգային կազմակերպությունների աշխատանքային ծրագրերին մասնակցելու համար իրենց երկրների ներկայացրած հայտերին՝ նախապես համաձայնեցնելով այդ գործընթացը:

Հոդված 6

Կողմերն անցկացնում են խորհրդակցություններ Բուլղարիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետությունում Բուլղարիայի Հանրապետության քաղաքացիների սոցիալական ապահովության, ինչպես նաև զբաղվածության կարգավորման վերաբերյալ երկկողմ համաձայնագրի նախագծի շուրջ:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի ներքո համագործակցության գործնական իրականացման նպատակով Կողմերը հաստատում են երկամյա գործողությունների կամ միջոցառումների ծրագրեր, որոնցում կսահմանվեն համագործակցության կոնկրետ ուղղությունները և ձևերը, կազմակերպչական և ֆինանսական պայմանները, միջոցառումների իրականացման ժամանակացույցը: Անհրաժեշտության դեպքում, Կողմերը կազմակերպում են երկկողմ հանդիպումներ՝ քննարկելու և վերլուծելու ընդհանուր աշխատանքների և երկամյա ժամանակահատվածի համար ստորագրված գործողությունների ծրագրերի իրականացման արդյունքները:

Հոդված 8

Կողմերի ներկայացուցիչները պարբերաբար նախարարական մակարդակի հանդիպումներ են կազմակերպում իրենց երկրներում: Այդ հանդիպումների ընթացքում կքննարկվեն փոխադարձ համագործակցության, աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման համար անհրաժեշտ միջոցների վերաբերյալ հարցեր, ինչպես նաև կիրականացվի կարծիքների փոխանակում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերի շուրջ:

Հոդված 9

Կողմերը կառուցում են իրենց փոխադարձ հարաբերությունները Եվրոպայում բարեկամական համագործակցության և գործընկերության հետագա զարգացման ոգով:

Հոդված 10

Կողմերը նպաստում են իրենց երկրների աշխատանքի և սոցիալական պաշտպանության հարցերով զբաղվող կառավարական և ոչ կառավարական մարմինների և կազմակերպությունների միջև համագործակցության զարգացմանը:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են Կողմերի ազգային օրենսդրության համաձայն:
Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերից յուրաքանչյուրը հոգում է իր պատվիրակությունների և փորձագետների՝ մյուս Կողմի երկիր ուղևորության հետ կապված ծախսերը, իսկ պատվիրակություններին և փորձագետներին ընդունող Կողմը՝ իր երկրում նրանց օրապահիկի, կեցության և կազմակերպական ծախսերը:

Հոդված 12

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրությամբ: Նշված արձանագրությունն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցումը ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած պահի դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ իր մտադրության մասին մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով ծանուցելու միջոցով: Այդ դեպքում, սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է ծանուցումը մյուս Կողմի կողմից ստանալու օրվանից վեց ամիս հետո:

Սույն Համաձայնագրի գործողության վավերականության դադարեցումը չի խոչընդոտում արդեն իսկ համաձայնեցված կոնկրետ նախաձեռնությունների իրականացումը, քանի դեռ Կողմերը չեն բանակցել դրանց կասեցման վերաբերյալ:

Ստորագրված է ք. Երևանում 2012 թվականի ապրիլի 3-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը՝ հայերենով, բուլղարերենով և անգլերենով, ընդ որում՝ երեք տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի կիրարկման ժամանակ դրա դրույթների մեկնաբանման մասով Կողմերի միջև հակասությունների դեպքում, գերակայում է անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2012 թ. հուլիսի 17-ին